

նեղուցներն, կապոյտ ծոցերն, կանաչ կղզիներն. և անոնց ճիշտ անուանքն կու տար
կարգաւ, ամենայն երազութեամբ, իբր թէ թզթոյ վրայ ընթեռնոյր: Եւ տեսնելով
զինքն այնպէս բարձրագլուխ, խարանաշ խոպոպիկներով, փակ աչք, վերէն 'ի վար
կապոյտ զգեստ, ոսկեղօծ կոճակներով, արձանի մը նման կանգուն և գեղեցիկ, ա.
մէնքն ալ կը հիւսնային, ժամուան մը մէջ գրեթէ երեք թռչող ճառագան սորուեր
էր, զոր միւս օր պիտի արուստանէր, Վիկտոր Թագաւորին մահուան յուզարկաւո-
րութեան հանգիսին տարեգարծին համար: Նոյն իսկ Նէլլի զարմացած և դորովով
իրեն կը նայէր, չգիշերով սեւաւ կտաւէ շինուած զննակին գրօշակը, և ծիծաղելով
իւր այն վառվռան և մաղձոտ աչքն: Իւր այս գէմքը շատ գեղեցիկ ազդեցութիւն
մ'ըրաւ վրաս, մտացս և սրտիս մէջ իբրու կայծականց նման բան մը՝ ձգեց: Եւ քար-
ձեալ ախորժեցայ, երբ երթալու ատեն տեսայ խեղճ Նէլլին այն երկու բար-
ձրահասակ և զօրեղաց մէջ, որ զինքը թեւերէն բռնած 'ի առն կը տանէին, այնչափ
ծիծաղեցնելով, որ բնաւ չէի տեսած իւր այնքան ծիծաղին: Մտնալով վերաստի
կերակոյց սենեակի, անգրագարձայ թէ չկայր անգ Ռիկոլէթթի Նկարը՝ որ զսա-
պատորոյ միմոսը կը ներկայացնէր. վասն զի չայրս շայն վերուցած էր, որպէս զի
Նէլլի չի տեսնայ:

Շարունակելի

— Ա Ռ Ա Կ —

— ԱՐԱՐԱԴԱՅ ՁԻԽՆՆ —

Անմիջապէս ջրհեղեղէն մի քիչ վերջ,
Արարգայ բարձր սարին ծերպին մէջ՝

Ձիւնի մի փերթ ինկնալով,

Անդ կը մընայ դարերով.

Բապիտակ և փայլուն,

Լուսի պէս շողողուն:

Արեգական մի ճառագայթ

Երբոր կ'երթայ զինք կը դրանէ,

Նա կը ցոլայ իր արամանդ,

Այլ բընաւին հալուել չէ:

Այսպէս մաքուր, անարատ

Կ'անցընէ հօտ գարեւր շատ.

Նոյն ասպանն աչքին առնէ,

Երասխաձորը ոտքին տակ.

Մօտէն կ'անցնին լուսին, արեւ,

Կ'որոտան մայք և փայլակ:

Նա միշտ իւր տեղ անասան

Փայլի գեղով բընական:

Այլ տէս, սա ևս ձանձրանայ

Իւր փառաւոր վիճակէն,

Կ'ուզէ իջնալ վար լեռնէն,

Տեսնալ մօտէն՝ հոն ինչ կայ:

Օր մի՛ խօսք մէկ կը լինին

Քամիին հետ, կը թըռչին,

— Կարեւոր բոյն և դագար

Թողով Մասեայ ի կատար, —

Ու գէպ 'ի յերևան

Կամացուկ կը ցածնան:

Ճանապարհին ցուրտ քամին

Փոխուի լինի տապաքին,

Եւ երբ սեղմէ կամացուկ

Ընկերին ձեռքը փափուկ,

Ձիւնըն թռչնայ կը հալի.

Եւ յերևան հագիւ հասած,

Կեղառտ ցիխոտ մի փողոցի

Մէջը կ'ինկնայ նա՝ շուր գարձած:

Ո՛վ անարատ ամբիւ հասակ,

Կարգաւ, սորվէ դուն այս առակ,

Եւ աւելի իմաստին

Ուշ դիւր՝ քան թէ իւր ձեռն:

Ձըլնի որ թէթէ խելքով դուն ըզբեղ

Փոփոխամիտ քամիներու ձեռք մատենս.

Գիտեմ՝ շուտով կը զըջաս,

Այլ անգարման կը մընայ քո մեծ վընաս:

Հ. ԳԵՐՈՎԵՐՎ. Վ. ԳՈՒՆԵՐԵԱՆ